

**ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 23.06.2025 թ. կայացած նիստի թիվ 15 արձանագրություն**

Օրակարգ

1. Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի թափուր պաշտոնների մրցութային ընտրության անցկացում:
2. 2024-2025 ուսումնական տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվություն (անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյան, ռումանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյան):
3. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թիվ 15-րդ նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը: Ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի թափուր պաշտոնների մրցութային ընտրության անցկացմանը:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. **Սեդա Քերոբի Գասպարյանի՝** պրոֆեսորի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Սեդա Գասպարյանը ունի 57 տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ, վերջին հինգ տարիներին հրապարակված 24 գիտական հոդված, այդ թվում՝ 3-ը՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, 1 մենագրություն, 1 դասագիրք, 2 ուսումնամեթոդական ձեռնարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Սեդա Քերոբի Գասպարյանի ընտրությունը անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. **Տիգրան Մերժիկի Միմյանի՝** պրոֆեսորի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Տիգրան Միմյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է գերմանական գրականությունը և նշանագիտությունը: Նա միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրված 26 գիտական հոդվածների հեղինակ է (վերջին հինգ տարիներին),

միջազգային գիտաժողովների մասնակից, ունի գիտամանկավարժական գործունեության փորձ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Տիգրան Սերժիկի Սիմյանի ընտրությունը արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. **Աննա Վանիկի Խաչատրյանի՝** դոցենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Նշվեց, որ Աննա Խաչատրյանը ունի 25 տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ, վերջին հինգ տարիներին հրապարակված 6 գիտական հոդված, այդ թվում 2-ը՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Աննա Վանիկի Խաչատրյանի ընտրությունը թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. **Իրինա Սերգեյի Մխիթարյանի՝** դոցենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Նշվեց, որ Իրինա Մխիթարյանը ունի 20 տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ, վերջին հինգ տարիներին հրապարակված 9 գիտական հոդված, այդ թվում 5-ը՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Իրինա Սերգեյի Մխիթարյանի ընտրությունը թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ՝

Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ **Սյուզաննա Աշոտի Գրիգորյանի՝** ասիստենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Սյուզաննա Գրիգորյանը ունի 16 տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ, վերջին հինգ տարիների ընթացքում կատարված գիտահետազոտական ու ուսումնական գործունեության արդյունքում ունի տպագրված 1 ուսումնական ձեռնարկ (համահեղինակությամբ) և 2 գիտական հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Սյուզաննա Աշոտի Գրիգորյանի ընտրությունը միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ՝ Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոս **Աննա Միհրանի Օհանյանի՝** դասախոսի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ընտրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Աննա Օհանյանը ունի 16 տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ, վերջին հինգ տարիների ընթացքում կատարված գիտահետազոտական ու ուսումնական գործունեության արդյունքում ունի տպագրված 1 դասագիրք (համահեղինակությամբ):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա հաստատել եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Աննա Միհրանի Օհանյանի ընտրությունը միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոսի պաշտոնում:

Դեկանն անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ 2024-2025 ուսումնական տարում անգլերենի թիվ 2 և ռոմանական բանասիրության ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություններին:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուստարում անգլերենի թիվ 2 ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 2 ամբիոնի ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանը ներկայացրեց 2024-2025 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքները: Ամբիոնը գործունեությունը ծավալում է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, հրատարակչական: Կրթական գործընթացի շրջանակում անգլերենի դասավանդման հիմքում են

բակլավրիատում՝ անգլերենը որպես օտար/երկրորդ լեզու՝ (EFL/ESL) և անգլերենը մասնագիտական նպատակների համար (ESP), իսկ մագիստրատուրայում՝ անգլերենը ակադեմիական նպատակների համար (EAP) դասընթացները: Ամբիոնը վերանայել է բակլավրիատում և մագիստրատուրայում անգլերենի ուսումնասիրությանն ուղղված ուսումնական ծրագրերը՝ նպատակ ունենալով առարկայական նկարագրերը համապատասխանեցնել ուստարվա սկզբին թեստավորման արդյունքում ձևավորված խմբերի գիտելիքների մակարդակին: Գիտահետազոտական աշխատանքն ամբիոնի դասախոսական կազմի գործունեության կարևորագույն մասն է կազմում: Կատարվում են ուսումնասիրություններ արդի լեզվաբանության տարբեր ուղղություններով՝ բառագիտության, իմաստաբանության և գործաբանության, լեզուների զուգադրական ուսումնասիրության, բառարանագրության և թարգմանության տեսության, ինչպես նաև օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի, գիտելիքների գնահատման և թեստավորման վերաբերյալ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքները հետաքրքիր և բովանդակալից զեկուցումներում պարբերաբար ներկայացվում են տարբեր գիտաժողովներին (ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային), ամփոփվում ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած հոդվածներում: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները գիտական տարբեր պարբերականներում հրատարակել են 20 հոդված: Նշվեց նաև, որ մասնագիտական վերապատրաստումների շրջանակում ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցել են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված մի շարք գիտաժողովների, սեմինարների: Հիմնականում վերապատրաստումները և դրանց հաջորդող քննարկումները նվիրված էին օտար լեզվի դասավանդման նորարարական մեթոդները լսարանում կիրառելու մարտահրավերներին ու դրանց հնարավոր լուծումներին: Միջազգային համագործակցության խթանման շրջանակում ամբիոնը համագործակցում է Լեհաստանի Գդանսկի համալսարանի հետ: Ամբիոնը կանոնավոր պարբերականությամբ տարին 2 անգամ հրատարակում է «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական պարբերականը, որն ընդգրկված է դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի պարբերականների ցանկում: Հաշվետու ժամանակահատվածում լույս են տեսել գիտական պարբերականի հետևյալ համարները՝ «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», հատոր 28, № 2(37), Երևան, 2024 և «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», հատոր 29, № 1(38), Երևան, 2025:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝

2024-2025 ուստարում ռոմանական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հ. Բաղդասարյանը նշեց, որ 2024-2025 ուստարում ռոմանական բանասիրության ամբիոնն իր աշխատանքներն իրականացրել է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, ինչպես նաև մի շարք աշխատանքներ են կատարվել միջազգային համագործակցության զարգացման առումով: Ամբիոնի գործունեության առաջնահերթ խնդիրը ծրագրային արդի պահանջներին համապատասխան դասավանդման որակի բարձրացումն էր, օտար լեզուների դասավանդման մեթոդների կատարելագործումը, ուսուցման բովանդակության մշտական արդիականացումը, թեստային աշխատանքների կատարելագործումը և համապատասխանեցումը գնահատման նոր չափանիշներին՝ ըստ գնահատման նոր կարգի: Առաջին կիսամյակում ամբիոնում կազմակերպվել են մեթոդական սեմինարների շարք՝ ուսուցման պրոցեսում արդի մեթոդների կիրառման շուրջ: Ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանի նախաձեռնությամբ և ջանքերի շնորհիվ ձեռք է բերվել պայմանավորվածություն Կա' ֆոսկարի համալսարանի հետ, ըստ որի իտալական բաժնի բոլոր դասախոսները պետք է անցնեն վերապատրաստման դասընթաց Erasmus+ ծրագրի շրջանակում այդ համալսարանում: Ամբիոնի իտալերենի դասախոսները վերապատրաստումներ են անցել նաև Տուշայի և Միլանի համալսարանում: 2024 թվականի օգոստոսի 30-ին ռոմանական բանասիրության ամբիոնը հյուրընկալել է Պերուջայի օտարերկրացիների համալսարանի պատվիրակությանը՝ ռեկտոր Վալերիո դե Չեզարիսի գլխավորությամբ, ինչպես նաև Տուշայի համալսարանի պատվիրակությանը՝ համագործակցության նոր հեռանկարներ քննարկելու համար: Հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն, ըստ որի՝ Պերուջայի օտարերկրացիների համալսարանն ամեն տարի կտրամադրի կրթաթոշակ իտալական բաժնի ուսանողներին ու դասախոսներին՝ այդ համալսարաններում իտալերեն լեզվի դասընթացների մասնակցելու համար: 2024-2025 ուստարում ամբիոնի գործունեության կարևոր խնդիրներից էր միջազգային համագործակցության ընդլայնումը, որն իրագործվել է մի շարք ուղղություններով: Ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանի մեծ ջանքերի շնորհիվ Իսպաներենի դասախոսների եվրոպական ասոցիացիայի (AEPE) XXVIII գիտաժողովը կազմակերպվել է Երևանի պետական համալսարանում 2025թ. ապրիլի 15-ից 18-ը: Գիտաժողովի խորագիրն էր՝ «Իսպաներեն՝ առանց սահմանների լեզու ժամանակի և տարածության մեջ. ավանդույթ, նորարարություն և միջմշակութային երկխոսություն»: Իսպաներենի դասախոսների եվրոպական ասոցիացիան աշխարհում

խապաներեն լեզվի, մշակույթի և իսպաներենի դասավանդման ոլորտում ամենահեղինակավոր ասոցիացիաներից է, որը ստեղծվել է 1968 թ. և իր կազմում միավորում է ամբողջ աշխարհի 40 երկրներից ավելի իսպաներենի մասնագետների: Գիտաժողովն անցկացվել է ռոմանական բանասիրության ամբիոնի հետ համագործակցությամբ՝ հարթակ ստեղծելով իսպաներենի զարգացմանն ու դասավանդմանը, ինչպես նաև իսպանալեզու գրականությանն ու մշակույթին վերաբերող հարցերի քննարկման համար: Գիտաժողովին մասնակցել են միջազգային առաջատար բուհերի (Իսպանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Ռումինիա, Լատվիա, Վրաստան) 35-ից ավելի մասնագետներ: Այս գիտաժողովը դարձավ մի բացառիկ իրադարձություն հայաստանյան իսպանախոս համայնքի համար՝ մեծապես նպաստելով իսպաներեն լեզվի և մշակույթի խթանմանն ու տարածմանը մեր հանրապետությունում:

Ինչպես և նախորդ ուստարիներին, այս ուստարում նույնպես ռոմանական բանասիրության ամբիոնի աշխատանքի կարևոր բաղադրիչներից էր արտասահմանցի հայտնի մասնագետների կողմից ամբիոնի դասախոսների վերապատրաստման շարունակական գործընթացի ապահովումը, այդ թվում՝ կրթական առցանց հարթակների օգտագործմամբ: Արտասահմանցի հայտնի մասնագետների կողմից կազմակերպվել են վերապատրաստման մի շարք դասընթացներ իսպանական բաժնի դասախոսների համար, որոնք կարդացել են Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի Ռոմանական, ֆրանսիական, իտալական ուսումնասիրությունների և թարգմանության ամբիոնի պրոֆեսոր Խուլիա Սնիլյա Մունյոսը, Գրանադայի համալսարանի Արվեստի դեպարտամենտի պրոֆեսոր Միգել Սոռոչեն, Լատվիայի Արվեստի ակադեմիայի իսպանագիտական դեպարտամենտի վարիչ Աննա Լեոնը և այլք: Ամբիոնի միջազգային համագործակցության զարգացման առումով հարկ է կարևորել նաև այն դասախոսությունները, որոնք կարդում են ամբիոնի դասախոսները արտասահմանյան հեղինակավոր բուհերում:

Հաշվետու ուստարում ռոմանական բանասիրության ամբիոնը առաջարկ է ստացել Իսպանիայի Կադիսի համալսարանի և Մեծ Բրիտանիայի Նյուքասլի համալսարանի հետ համատեղ մասնակցել մի ծրագրի, որի նպատակը հումանիտար գիտություններում արհեստական բանականության կիրառման քննությունն է՝ COIL (միջազգային համագործակցային առցանց ուսուցում) մեթոդաբանությամբ: Այս ծրագիրը հնարավորություն է ընձեռում այն ուսանողներին, որոնք չեն մասնակցում Erasmus+ փոխանակման ծրագրերին, իրենց գիտելիքները զարգացնել միջազգային վիրտուալ փոխանակման շնորհիվ: Ըստ այս նախագծի՝ երեք համալսարանների դասախոսները, ելնելով յուրաքանչյուր համալսարանում իրագործվող կրթական ծրագրերից, մշակում են աշխատանքային պլան, առցանց հարթակում ներկայացվում է

դասախոսությունը, որից հետո ուսանողները, բաժանվելով խմբերի, իրենց կարծիքներն են փոխանակում միջազգային բազմամշակութային համատեքստում գրավոր և բանավոր թարգմանություններում արհեստական բանականության կիրառման առավելությունների ու թերությունների վերաբերյալ: Այս ծրագրի շրջանակում դասախոսություններ են կարդացել Նյուքասլի համալսարանի դոկտոր Նոելիա Կուչեյրոն՝ «Մասնագիտական էթիկան բանավոր թարգմանության ժամանակ» թեմայով (նոյեմբերի 25-ին), Կադիսի համալսարանի դասախոս, դոկտոր Մարիա Կարմեն Ֆեռնանդեսը՝ «Ակնարկ հայտնի բանավոր թարգմանիչների մասին» թեմայով (նոյեմբերի 28-ին), նույն համալսարանի համակարգչային լեզվաբանության մասնագետ, դոկտոր Մարիո Կրեսպոն (մայիսի 9-ին):

Ամբիոնի դասախոսները 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում հրատարակել են 1 մենագրություն, 4 թեզիս միջազգային գիտաժողովում, 6 գիտական հոդված, այդ թվում՝ 2-ը Scopus գիտատեղեկատվական շտեմարանում, որոնցից մեկն ընդունվել է տպագրության: Իտալիայի դեսպանատան հետ ակտիվ համագործակցության շնորհիվ 2023 թ. սեպտեմբերից ուսումնական գործընթացում ներգրավվել է Իտալիայի ԱԳՆ-ից գործուղված լեզվակիր դասախոս Օնելա Չիրիլոն, որի դերը կարևոր է ոչ միայն ուսանողների բանավոր խոսքի, հաղորդակցական հմտությունների զարգացման գործում, այլ նաև տարբեր արտալսարանային աշխատանքներում: Իտալիայի դեսպանատան հետ համագործակցության շնորհիվ 2025 թ. փետրվարին Իտալիայի ԱԳՆ-ն ամբիոնի իտալական բաժնին է տրամադրել արժեքավոր մասնագիտական գրականություն (մոտ 40 գիրք), ինչն էապես կօգնի կատարելագործելու իտալերեն լեզվի տեսական և գործնական դասընթացները: Ամբիոնում արդեն ավանդույթ է դարձել Սերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել «Իսպաներենը որպես օտար լեզու» որակավորման միջազգային քննությունը՝ համապատասխան օտար լեզուներին ներկայացվող եվրոպական արդի չափանիշների: Քննությունը կազմակերպվել է 2024 թ. նոյեմբերի 22-23-ին և 2025թ. մայիսի 24-ին:

Նմանապես, Սիենայի համալսարանի և Հայաստանում Իտալիայի դեսպանատան հետ համագործակցությամբ 2024 թ. դեկտեմբերի 5-ին, ապրիլի 11-ին և 2025թ. հունիսի 11-ին կազմակերպվել է CILS իտալերեն լեզվի որակավորման միջազգային քննությունը, որին մասնակցել է նաև Իտալիայի ԱԳՆ-ից գործուղված դասախոս Օնելա Չիրիլոն:

Այս ուստարում, ինչպես և նախորդ տարիներին, հոկտեմբերի 15-ին ԵԼՀ ֆակուլտետի Ե. Չարենցի անվան դահլիճում կազմակերպվել է իտալերեն լեզվին նվիրված շաբաթը՝ «Իտալերենը և գիրքը. աշխարհը տողերի միջև»՝ նպատակ ունենալով ուսումնասիրել ժամանակակից աշխարհում լեզվի և գրականության միջև կապը՝ բարձրացնելով նաև գրքի դերն ու արժեքը:

Նշվեց նաև, որ հոկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ կազմակերպվել է «Իբերոամերիկյան էքսպո-փառատոն»՝ նշելու իսպանախոս աշխարհի միասնությունը, համերաշխությունը և մշակութային բազմազանությունը: Այն կազմակերպվել էր ռոմանական բանասիրության ամբիոնի և Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանության, Դոմինիկյան Հանրապետության դեսպանության ներկայացուցչության և ՀՀ-ում Իսպանիայի դիվանագիտական ներկայացուցչության հետ համագործակցությամբ:

Այսպես, 2024 թ. նոյեմբերի 21-ին ԵՊՀ-ի իսպանական բաժին է այցելել Հայաստանում Իսպանիայի թագավորության դեսպան Ռիկարդո Մարտինես Վասկեսը, որի շրջանակում ամբիոնը կազմակերպել է մշակութային միջոցառում: 2024թ. հոկտեմբերի 18-ին «Իբերոամերիկյան էքսպո-փառատոն»-ի շրջանակում և 2025 ապրիլի 15-ին միջազգային գիտաժողովի շրջանակում ամբիոնի հրավերով ԵՊՀ է այցելել Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպան Ռաֆայել Գոնսալես Ալեմանը: 2025 թ. հունիսի 10-ին ԵՊՀ-ում հյուրընկալվել է Հայաստանում Ուրուգվայի Արևելյան Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սիլվանա Լեսկա Բարոլինը, որի հետ ամբիոնում հանդիպման ժամանակ մշակվել են համագործակցության տարբեր ծրագրեր: 2025 թ. ապրիլի 30-ին ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի իտալական բաժնում էր ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեսանդրո Ֆերանտին: Դեսպանի այցը ֆակուլտետ կարևոր քայլ է ակադեմիական ու դինավագիտական համայնքների միջև համագործակցության ամրապնդման համատեքստում: Փետրվարի 21-ին ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում տեղի ունեցավ ՀՀ-ում Դոմինիկյան Հանրապետության դեսպանության աջակցությամբ վերանորոգված լսարանի հանդիսավոր բացումը: Նորաբաց լսարանը նախատեսված է իսպաներենի խորացված ուսուցման համար և միտված է խթանելու ԵՊՀ-ում իբերոամերիկյան մշակույթի տարածումը: Այս առիթով ԵԼՀ ֆակուլտետ այցելեց Դոմինիկյան Հանրապետության դեսպան Ալեխանդրո Արիաս Սարսուելան, որն ընդգծեց համալսարանի հետ համագործակցության կարևորությունը: Դեսպանատների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցությունը կարևորվում է նաև արտադրական պրակտիկայի կազմակերպման հարցում: Եթե նախորդ տարիներին ամբիոնի ուսանողների պրակտիկան կազմակերպվել է ՀՀ-ում Ուրուգվայի Արևելյան Հանրապետության դեսպանատանը, Արգենտինայի Հանրապետության դեսպանատանը, ապա այս տարի հաջողվել է նաև պրակտիկան կազմակերպել Հայաստանի Հանրապետությունում Դոմինիկյան Հանրապետության դեսպանության ներկայացուցչությունում և Գվատեմալայի հյուպատոսությունում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանի
հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և

գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Դալայան

23.06.2025 թ.